

ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԸՇԼԿԵՐՏՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ
ՏԱԲՎՈՂ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ
ՆՅՈՒԹԵՐԸ



ԱԶԵՐԵՆՆԵՐ

ԲԱԳՈՒ — 1938 թ.

613
7-99

20 JUL 2010

Ս. Մ. ԳՐՈՄԲԱՆ և Լ. Ս. ԴԵՑՆԵՐ

613
9-99 սլ.

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԱԾԵԿԵՐՏՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ
ՏԱՐՎՈՂ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ
ՆՅՈՒԹԵՐԸ

Ա Զ Ե Ր Ն Ե Շ Ր

ԲԱԳՈՒ — 1938 Թ.

27.03.2013



1870
38

Նպատակ ունենալով սգնելու տարրական դպրոցի ուսուցչին և վարիչին՝ յերեխաների դաստիարակութեան և կրթութեան հարցերի մասին ծնողների հետ տարվող զրույցների ժամանակ, —ՌԻՏՖՍՀ Կուստոզկոմատի տարրական դպրոցների վարչութիւնները հրատարակում են «Նյութեր տարրական դպրոցի աշակերտների ծնողների հետ ուսուցիչների կողմից տարվող զրույցների» բրոշյուրների սերիա:

Յերկրորդ մասը պարունակում է հետևյալ հարցերը.

- 1. Յերեխաներին ստիտարական—առողջապահական ընտելութիւնն պատվաստելը:
- 2. Ի՞նչ պետք է իմանան դպրոցական յերեխաների ծնողները վարակիչ հիվանդութիւնների և հիվանդ յերեխաների խնամքի մասին:

Առաջին մասը բաղկացած է հետևյալ թեմաներից.

- 1. Ի՞նչ և ինչպե՞ս կարգալ յերեխաներին:
- 2. Կինոն վորպես յերեխաների դաստիարակութեան լավագույն միջոցներից մեկը:
- 3. Ի՞նչ պետք է իմանան ծնողները յերեխաների խաղալիքների ու խաղերի մասին:

Ռ. Ի. Ֆ. Ս. Հ. Կուստոզկոմատի տարրական դպրոցների վարչութիւն

**ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՑ
ՏԱՐՎՈՂ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԸ**

ՅԵՐԵՆԱՆԵՐԻՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ — ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԸՆՏԵԼՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԱՍՏԵԼԸ .

ՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱԳՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱ-
ԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՌԱՋԱԴԻՄՈՒ-
ԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ

«Մաքրությունը՝ առողջության դրավականն է» :
Մաքրության կանոնների պաշտպաններն ողնում է
պահպանելի հիվանդություններից : Բայցի դրանից
մաքրության և մաքրասիրության սովորությունները
կարգապահ են դարձնում յերեխաներին . մաքրությու-
նը և կարգապահությունը — սնրաժանն են, իսկ կարգա-
պահությունից կախած է յուրաքանչյուր աշխատան-
քի հաջողություն :

«Վարտեղ մաքրության կա, այնտեղ առեն
ինչում կարգ կա,
Վարտեղ կարգ կա՝ աշխատանքը՝ կանգառում
եղ չգիտես :

Մեծ խոնամներից մենք մեզ կազատենք,
Յեթե հետևենք մենք մեր մաքրության» :

(Դեմյան Բեդնի)

Յե՛վ դպրոցը, և՛ ծնողները պետք է պարբերա-
բար դաստիարակեն յերեխաների մեջ սովորություն-

ներ գրեպի ճշտագաս աշխատանքը, մաքրութիւն ու կարողն ամեն ինչում: Մաքրութեան և մաքրասիրութեան կայուն ընտելութիւնների զաստիարակումը հանդիսանում է լավ ուսման պայմաններից մեկը:

Յեթն դպրոցը յերեխաներին սովորեցնել մաքրութեան, իսկ տան մեջ այդ ընտելութիւնները չամբասպընդվեն, յեթե ծնողները չմասնակցեն առողջապահան ընտելութիւնների զաստիարակմանը, այդ ընտելութիւնները յերեխաների մոտ չեն ամբանա: Քուեր հազուստ, ուստելիքը, լվացիլիքը, այդ բոլորը տեղի յեն ունենում տանը—հաստկապես սնային ամբողջ օնօրին կապակցութեամբ և ձեռք են բերում սովորութիւններ գրեպի մաքրութիւնն ու կարգապահութիւնը:

ԾՆՈՂՆԵՐԻ ՅԵՎ ՄԵԾԵՐԻ ՈՐԻՆԱԿԸ.

ՏՆԱՅԻՆ ԱՌՈՂՁ ԵՐԱՊԱՍ.

Վճռական նշանակութիւն ունի ծնողների և մեծերի որինակը: Վոչ մի բանավոր ներշնչում նպատակին չի հասնի, յեթե ծնողները գործնականում չեն կատարում ամենատարրական առողջապահական կանոնները՝ թքում են հատակին, հանդուրժում են բնակարանում կեղտոտութիւններ և ընդհանրապես իրենք չեն պահպանում մաքրութեան կանոնները: Ով կամենում է յերեխաներին վարժեցնել մաքրութեան և կարգապահութեան կանոններին, նա պետք է անձամբ նրանց որինակ տա: Մեծ նշանակութիւն ունի նախօրը շրջապատը. յեթե սենյակը թափթփված է պահում, յեթե յերեխայի շուրջը միշտ կեղտոտ և ու անկարգութիւն, ապա նրանից չի կարելի պահանջել մաք-

րութեան պահպանում: Այդպիսի հանգամանքներում նա յերեք չի ընտելանա մաքուր լինելուն: Դպրոցականին պետք է առանձին անկյուն հատկացնել (ցանկապի յե լուսամուտի մոտ), նրա համար ըստ հասակի հարմարեցնել սեղան և աթոռ «լուսի աղբուրը՝ լուսամուտից կամ լամպից—պետք է ձախ կողմից լինի, վորպեսզի գորդ ձեռքի տակերը չընկնի տետրակի վրա: Սեղանի մոտ պետք է դարակ լինի դպրոցականի գրքերի և տետրակների համար, վորտեղ գտնվում են նրա մատիաները, գրչակոթիները և այլն: Յեթն դպրոցականի գրքերը և ուսումնական պիտուքները թափթփված են դանազան տեղերում, յեթե յերեխան պարապմունքի համար մշտական տեղ չունի, նա չի ընտելանա կարգապահութեանը: Ինքը՝ դպրոցականը նաև պետք է հետևի իր անկյան մաքրութեանը և հավաքի թափված իրերը:

Չի կարելի փոքր յերեխաներին հանձնարարել հավաքելու ամբողջ բնակարանը: Այդ նրանց ուժերից վեր է: Ստիպի կարելի յե նրանց ներդրակել ոգնելու մեծերին ամենաթեթև աշխատանքներում, — որինակ՝ քսոցել տնային ողանցքը, հետևել, վորպեսզի ձեռքը, յերբ լուսամուտները փակ են, սենյակն ողափոխվի որական վոչ պակաս 2-3 անգամ՝ 15-30 րոպեյով, հատկապես քնից առաջ: Այդ դրանց ուժերին համապատասխան է և ընտելացնում է հետևելու առողջապահութեան կանոններին:

ԱՐՏԱՔԻՆ ՄԱՔՐՈՒՅՈՒՆԸ. ՀԱՂՈՒՍԱՐԸ ՅԵՎ

ԿՈՇԻԿՆԵՐԸ.

Առողջապահական ընտելութիւնների զաստիարակութիւնն ակնում և արտաքին մաքրասիրութիւնից:

և մաքրությունից: Կարելի չէ յերեխաներին հանձնարարել ամեն ուր մաքրելու իրենց հազուատը և կոչիկները, ի հարկե վոչ բնակելի սենյակում, այլ նրանից դուրս: Գիշերվա համար հազուատը կանոնավոր պետք է դարձվի կամ կախի վարձյալ տեղում: Քանի վոր խոզանակով չի կարելի ամբողջ փոշին հեռացնել, ապա ժամանակ առ ժամանակ, մոտավորապես վեցորդակը մի անգամ, հազուատները պետք է ողտախտել և թափ տալ: Յերեխայի կողմից չհազնվող հազուատները չպետք է բաց ընկած մնան, այլ պետք է պահվեն փակ պահարանում: Վերին հազուատները՝ մուշտակը, վերարկուն—տոխտարապար պարտանակում են շատ փոշի, յերբեք չպետք է վերին հազուատով յեվ կրկնակոշիկներով մտնել բնակելի սենյակը: Շատ լավ կլինի յուրաքանչյուր յերեխայի համար ունենալ առանձին կախարան կամ կեն, վորը համապատասխան է նրա հասակի բարձրութեանը, վորտեղի նա փնջը կարողանա կախել ու վերցնել իր շորերը: Գլխարկը պետք է առանձին կախել և վոչ թե դնել գլուխակում կամ վիճի մեջ: Մուտքի դռան մոտ պետք է դնել ջնջոց, փոտքերը մաքրելու համար: Կարեւոր է յերեխային վարժեցնել մաքրելու իր հազուատը վոչ միայն տրական մեկ անգամ՝ առավոտները, այլ և ուրվա ընթացքում, յերբ նա կեդրոտովի անհրաժեշտ է յերեխային ընտելացնել միշտ մաքրու ման դպրու:

ՄԱՐՄՆԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ.

Հազուատի մաքրութեան հետ միշտ կապված է սպիտակեղենի և մարմնի մաքրութեան հարցը: Շատ կարեւոր է յերեխային ընտելացնել լվանալու

իր մաքրվելու — բարեկրամ կամ վաննայում — ամեն վեցորդակ, ըստ վորում փոխելու սպիտակեղենը: Մարմինը պետք է լվանալ 33-37 աստիճան տաք ջրով (ըստ Յեղյուսի): Տաք ջուրը սապոնի հետ միատիկ աճանից լավ է մաքրում մարմնի կեղտը: Մաշկը սրտունակում է գեղձեր, փորոնք մշտապես արտադրում են քրտինք և ճարպ. բացի դրանից, կեղտը մշտապես դուրս է գալիս մաշկի վերին շերտը: Կաշվի այդ թեփոտվող բջիջները չորացած քրտինքի և ճարպի հետ միասին առաջացնում են կաշվի կեղտ: Այդ կեղտը փակում է կաշվի փոքրիկ ծակափակները—վորտնց միջոցով տեղի յե ունենում այսպես կոչվող «կաշվի շրնչաությունը»:

Յուրաքանչյուրը դորձնակամում զգացած կլինի, թե մարդ վորքան թարմ ու առույգ է զգում իրեն յողանալուց հետո: Լողանալու ժամանակ յուժմում և դուրս է գալիս կաշվի կեղտը, բացվում են փակված ծակափակները, թեթեւանում է կաշվի շնչաությունը: Կաշվի գեղձերի յերկարատե փակվելը կարող է չիրաններ և պղուկներ առաջացնել: Կեղտոտ կաշվի վրա հեշտութեամբ առաջանում է քրտի ճանձը, փորն առաջացնում է վարակիչ ըստ հիվանդութեան:

Ամառը յերեխաները հաճախ յողանում են գետում, լճում, ծովում. դա շատ ոգտակար է, քանի վոր ամրանում է սրգանիզմը և նա ավելի քիչ է յենթակա դարձնում ցրտահարութեան: Մակաջն յողանալիս հարկավոր չէ շատ յերկար մնալ սառը ջրում (10-15 րոպե, նայած թե ջուրն ինչ ջեմաստիճանի յե): Մակաջն սառը ջրում յողանալիս ամբողջովին չի կարող փոխարինել մարմնի լվացմանը տաք ջրում, քանի վոր սառը ջրում սապոնը վատ է փոքրում, և սառը ջուրն

եւ այնպես չի լուծում կաշիի կեղտը, ինչպես սաք ջուրը: Ուստի դետում, լճում, ծովում լողանալու հետ միասին հարկավոր է, վորպեսզի վոչ պակաս քան վեց որը մի անգամ, մարմինը լվանալ սապնով սաք ջրում: Լողանալու ժամանակ հանձնարարվում է գործածել մաշարկա, սպունգ, դրանով արագանում է կաշիի մեռած շերտերի թեւի տալը յեւ ասիւրանում է սապոնի փրփուրը: Յեթե դուռ չկա, կարելի չէ փոխարինել՝ մարմնի վրա կրկնակի մաքուր ջուր լըցնելով: Բացի վեցորդակը մի անգամ մարմինը լվանալուց, շատ ոգտակար է ամեն որ ամբողջ մարմինը չփել թաց սրբիչով. ավելի լավ է, յեթե դուռ կա, ամեն որ դուռ ընդունել: Դուռ կամ թաց շփումը մտքում է կաշին, հեռացնում է կաշիի կեղտը և բացի դրանից բարելավում է կաշիի արյան շրջանառութունը և ամբողջում որդանդամը:

Առանձին ուշադրութուն է պահանջում վոտքերի մաքրութունը, վոտքերը, դիւսվորապես ամառը, ամբողջ մարմնից ավելի շուտ են կեղտոտվում յեւ ուժեղ ջրանում: Ավելի լավ է լվանալ վոտքերը ամեն յերեկո քնելուց առաջ, վորպեսզի չկեղտոտել անկողինը:

Վոտքերը խիստ քրտնեղիս տղնում և սենյակի ջերմատիճանի տաքութունն ունեցող ջրի մեջ լվանալը. արյունատար անոթները կծկումները սառը ջրից պակասեցնում են վոտքերի քրտնեղը:

ՍՊԵՏԱԿԵՂԵՆԻ ՓՈՅԵԼԸ.

Մարմինը բաղնիքում կամ վաննայում լվանալը պետք է գուգակցվի սպիտակեղենը փոխելու հետ.

սպիտակեղենը ծծում և կաշիի արտադրանքը և կեղտոտում մաշկը: Ասպարուցված է, վոտք սպիտակեղենը 10 որ հազնելուց հետո սովորաբար ասիւրանում է իր քաշի 0,1 չափով՝ աղքանը նրա մեջ ծծվում և հալաքում և կեղտ, վոտք աչքով չի կարելի նկատել: Կեղտոտ սպիտակեղենի վրա հեշտութամբ մնում ու բաղմանում են միկրոբները: Այսպիսով կեղտոտ սպիտակեղեններն ոժանդակում են վարակմանը:

Սպիտակեղենը պետք է փոխել առնվազն վեցորդակը մի անգամ: Կեղտոտ սպիտակեղենը պետք է պահել փակ կողովում, կամ պարկում, այն չպետք է բաց պահել, կամ վորտեղ պատահի, մասնավորապես մահճակալի տակ:

Վոչ մի դեպքում յերեխաներին չի կարելի սալ ուրիշի կողմից հազնված սպիտակեղենը: Սպիտակեղենը պետք է նախորդ լվանալ: Դա վերաբերվում է նաև նոր գնված սպիտակեղեններին: Լավ է, յերբ սպիտակեղենը դիչերն ողախովում է. ամառը այն կարելի չէ կախել բաց պատուհանի կամ ողանցքի մոտ, իսկ ձմեռը՝ աթոռի վրա կամ հատուկ պահարանի մեջ, վոչ մի դեպքում չի կարելի սպիտակեղենը դնել կամ բարձի տակ պահել:

Յեթե սպիտակեղենում կամ իրերում վոջիչներ և անիծներ են հայտնաբերված, պետք է անիժպպես փոխել սպիտակեղենը և լողանալ բաղնիքում: Կեղտոտ սպիտակեղենը պետք է շուտով լվանալ նախորդ թրջելով մոխրաջրի մեջ և վոչ մի դեպքում շարահել բաց, վորպեսզի վոջիչները չտարածվեն: Լավ է նույնպես հարթուկել վոջրոտած սպիտակեղենը և հագուստները սաք հարթուկով, կարատեղերի և ծալքե-

րի վրայով, վորով ապանվում են վոլիւնները և անխնայները:

Եստ քաղաքներում վրան բաց թողնող բազմաթիւներ, վորտեղ մարդկանց լողանալու հետ միաժամանակ ախտահանում են նրանց խրեթը (գլխինՖեկեղիտայի յին յինՖարկիում) այսինքն վոչնչացվում են միջատները: Բնադնիք գնալուն սեղեղեր կարելի չէ ստանալ տանխտարական բժիշկներից ձրի կելարով: Անհրաժեշտ և չեչանց նաև այն, վոր վոլիւնները տարածում են չափորոշնց լուրջ վարակիչ բժաւար տիճ հիվանդութիւնը: Վորտեղ չկան վոլիւններ, այնտեղ չի կարող լինել և բժաւար տիճ:

Այն բոլորը, ինչ վոր սովեց սպիտակեղենի մասին, մկրտեցում և նաև դուրպաներին, միայն հարկաւոր և նրանց ավելի արագ փոխել, վորովհետեւ վոտքերն ավելի յին քրտնում: Գուրպաները պետք է փոխել վոչ պակաս 5-6 որը մի անգամ, իսկ յեթե վոտքերը շատ են քրտնում, սպա յուրաքանչյուր 2-3 որը մի անգամ, առանձնապես ամառը:

ԱՆԿՈՂԻՆ, ՔՈՒՆ.

Ինչպես հագնելու սպիտակեղենը, նույնպես հաճախ պետք է փոխել նաև անկողնու սպիտակեղենը*):

Յերեխայի անկողինը պահանջում և ծնողներից հատուկ ուշադրութիւն: Անկողնում յերեխան անց և կացնում որվա ավելի քան մի յերրորդը: Նախ, վորը հիմնականն է՝ յերեխան պետք է ունենա առան-

*) Անկողնու սպիտակեղենին ևն պատկանում ստալանը, մկրտակասաւանը և բարձի յերեսը:

ձին անկողին: Յերկուսով քնելու ժամանակ յերեխան չի կարող ինչպես հարկն է հանդատանալ, երա սեղը նեղ է: Յերկուսով քնողները հաճախ շնչում են դեմք-դեմքի և յուրաքանչյուրն այսպիսով շնչում և այն սղը, վորն անպետք և արդեն շնչելու համար: Միասին քնելու ժամանակ սերա շնչումը տանում է դեպի գանազան վարակիչ հիվանդութիւնների փոխանցման, ինչպես որինակ դրիպիլ, թոսի և այլն:

Յեթե հարաւոր չի յերեխային առանձին մահճակալի դնել (որինակ տեղ չլինելու սրտածառով) վարելի չէ յոլա դնալ առանց դրան, ուղտագործելով ծալվող մահճակալ, վորը ցերեկը վարելի չէ մկրցնել, կամ յերեխային առանձին անկողին պատրաստել, արկողների կամ սեղուկների վրա:

Փետուրե և առհասարակ փափուկ ներքնակներն ընդհանրապես անպետք են յերեխաների համար, վորովհետեւ նրանց վրա պառկելն արգելում է վոտկորների ճիշտ աճմանը և քնքչացնում է յերեխաներին: Յերեխայի համար ամենից լավ է քաթանով պինգ ձգված մահճակալը, կամ յերկաթե մահճակալը դրսպանակացանցով և մաղե ներքնակով: Չի կարելի յերեխայի անկողինը դնել արտաքին պատի մոտ (ցուրտ և խոնավութիւն) կամ գլուխը դեպի վառարանը քնել (դրիլ տաքացումը):

Անկողինը պետք է պարբերաբար ուղախլաման յինՖարկիլի: Վորքան հաճախակի չի անկողինն ուղափոխվում, այնքան լավ է: ամենից լավ է ամեն որ պատշկամբ դուրս տանել անկողնու սպիտակեղենը կամ բակ տանել, կամ թե փոքի բաց պատուհանի մոտ:

Յերեխան պետք է վարժեցվի այն բանին, վորպետեղի վոր միայն շորերը հազին չպարկի անկողնում, ալ նաև ճատի անկողնու վրա, անկողինը չկեղտոտելու համար: Վերնահագուստը միշտ փոշի յե պարունակում իր մեջ: Քնելուց առաջ անհրաժեշտ է հանել ամբողջ սպիտակեղենը բացի շապկից. ամառն ապելի լավ է քնել միայն տրուսիկով: Լավ է նույնպես ունենալ գլխերային առանձին շապիկ, վորպետեղի ցերեկվա շապիկը գլխերվա ընթացքում ողորկոխվի, իսկ գլխերվանը՝ ցերեկվա ընթացքում: Անհրաժեշտ է յերեխային վարժեցնել նաև նրան, վոր վերժակով չի կարելի գլուխը ծածկել, վորոհետև դրանով դժվարացվում է ողի մուտքը և յերեխան ստիպված է լինում ամբողջ գլխերը շնչել սպականված ող. ձեռքերը պետք է վերժակից դուրս պահել, և վոր թե անկողնու տակը:

Տարվա թուր յեղանակներին, քնելուց առաջ պետք է սենյակը պարտադիր կերպով ողորկոխել:

ՅԵՐԵՍԻ, ՊԱՐԱՆՈՑԻ ՅԵՎ ՁԵՌՔԵՐԻ ԼՎԱՆԱԼԸ.

Թվում է, թե հասարակ դործ է յերեսի, պարանոցի և ձեռքերի վանալը, այն ինչ յերեխաները հաճախ լավ չեն լվացվում փոշ միայն անփթուխթունից, ալ վորովհետև չգիտեն, թե ինչպես պետք է լվացվել: Հարկավոր է ուշադրութուն դարձնել այն բանի վրա, վորպետեղի յերեխաները մանրադմնեխն կերպով լվանա քիթը, ծոծրակը, ականջների հետևը, քունքերը:

Լավ է լվացվել հոտոզ ջրով և փոշ թե տաշտի մեջ, վորովհետև փերջիների դեպքում լվացվում են կեղտոտ-

փած ջրով: Յեթե չիա լվացարան կամ ջրմուղի ծորակ, կարելի յե ոգնել մեկը մյուսին—մեկը լվացվում է, մյուսը նրա ձեռքերին մաքուր ջուր է լցնում: Մի անգամ այն պարտադիր է յուրաքանչյուրի համար առանձին սրբիչ ունենալը: Ընդհանուր սրբիչի միջոցով կարելի յե վարակվել տրախտամարով աչքերի վարակիչ հիվանդություններով, թոքախտով, գլխապտով և ուրիշ հիվանդություններով: Սրբիչը, ինչպես և քիթ թաշիկները, յուրաքանչյուր յերեխա պետք է ունենա առանձին և այն էլ մաքուր:

ԳԼԽԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Մազերն ոժանդակում են գլխի կաշվի վրա արտադրված քրտինքի, ճարպի, ինչպես նաև փոշու կուտակմանը: Ուտի հանձնարարվում է յերեխաների գլխի մազերը կարճ պահել ամեն որ սանրել, և հաճախակի լվանալ տաք ջրով ու սապոնով: Յեթե մազերի մեջ հայտնաբերված են վոջիլներ և անիճներ, նրանից անմիջապես պետք է ազատվել: Կարելի յե մազերը թրջել քացախի լուծույթով, փաթաթել 20 րոպե թաշիկներով և հետո սանրել ու լվանալ տաք նով: Քացախից պոկվում են մազերից կրպած անիճները: Մի քանի օրից հետո գլխի վոջիլների փոչեցացումը նորից պետք է կրկնել, վորպետեղի լիովին հափառացած լինել նրանց հեռացման վերաբերյալ:

ՁԵՌՔԵՐԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ.

Հատուկ նշանակութուն ունի ձեռքերի լվանալը: Կեղտոտ ձեռքերի միջոցով հեշտությամբ է հազորդ-

վում վարակը: Ձեռքերով վերցնում են կերակուրը, խոկ կերակրի հետ վարակիչ հիվանդութեանների զրգուիչները ներս են թափանցում որպանիվմի մեջ: Այսպես հաճախակի տեղի յե ունենում վորովայնային տիֆով, պարատիֆով, արնալուծով (շիզիլիտերիտով) իսկ հաճախ ճիճուներով վարակվելը: Մաքուր ձեռքերը, վորոնք յուրաքանչյուր ուտելուց առաջ և յուրաքանչյուր արտաքնոց հաճախելուց հետո սապոնով պետք է լայլ լվացված լինեն — պարտադիր կանոն է: Վորպեսզի սապոնը չկեղտոտվի, պետք է նրան պահել սապոնի ամանում:

Նվազ կարևոր չե նաև, վորպեսզի յերեխաները յեղունդները չկրծոտեն. պետք և վարճ կտրել յեղունդները և ձեռքերը լվանալու ժամանակ հեռացնել յեղունդներին տակի կեղտը: Յեղունդներին տակի կեղտի մեջ հաճախ լինում են, բացի վարակիչ հիվանդութեանների զրգուիչներից նաև ճիճուների ձվեր: Եստ յերեխաների մոտ ճիճուները յերևում են մեծ մասամբ կեղտոտ ձեռքերի յեղունդները կրծելու սովորութեանից:


ՈՒՏԵՆԻՔԸ. ԽՄԵԼՈՒ ԶՈՒՐԸ.

Բացի մաքուր ձեռքերից ստամոքսային հիվանդութեանները կանխելու համար նշանակութեան ունի ևս մի շարք կանոններ:

Պետք է հետեվել բոլոր սննդամթերքների մաքրութեանը, նրանց բաց չպահել, այլ ստիպված տեղում — բուֆետում, պահարանում, սեղանի արկղում: Առանձնապես կարևոր է ամառ ժամանակ կերակուրը պահպանել ճանճերից՝ վարակը տարածող-

ներից: Բանջարեղենները և պտուղները դորձած լեռուց առաջ պետք է լվանալ մաքուր ջրով, իսկ ամենից ճիշտը կլինի յեռացրած ջրով: Խմելու ջուրը, ինչպես և կերակուրը, պետք է պահպանել կեղտոտվելուց. ջուրը պետք է պահել ծածկված անոթում կամ տակառում ամուր փակվող խուրով, առանց ճեղքված քների, իսկ սեղանի վրա՝ փակ ջրամանում: Ավելի լավ է ոգտվել յեռացրած ջրով, քան հում, քանի վոր յեռացումը սպանում և միկրոօրգանիզմ: Կարելի չե, նաև, ոգտվել հում ջրից, յեթե լրիվ ստահուլթյուն կա նրա լավ վարակի նկատմամբ, որինակ՝ բարեկարգ ջրմուղից, աղբյուրից, արտեղյան ջրհորից: Յեթե խմելու ջուրը վերցվում է փորված ջրհորից, ապա նրա շրջակայքում չպետք է լինեն ջրի կեղտոտման աղբյուրներ (աղբանոցներ, արտաքնոցներ, գոմեր և այլն): Յուրաքանչյուր ջրհոր պետք է ունենա ծածկոց: Նրա մոտ պետք է ընդհանուր դույլ լինի, վորպեսզի յուրաքանչյուրն իր գուլլովը կեղտ չմտցնի ջրհորի մեջ: Անասունների ջրելու վայրը պետք է այնպես պատրաստվի, վորպեսզի խմելու ջրի կեղտոտման վտանգ չլինի: Պետք է հետևել, վորպեսզի յերեխաները ջրհորի մեջ գանաղան տաքիաներ, ինչպես որինակ քարեր, փայտի կտորներ, տափել ևս մկներ, դաշտամկներ և այլն չըցնեն: Պետք է բացատրել նրանց՝ ատողջութեան համար արխախի կեղտոտ ջրի խմելու ամբողջ վտանգը: Խմելու համար հում ջրի արեքակամութեան մասին ավելի լավ է խորհրդակցել բժշկի հետ: Յեթե ամիսը վարդում յերեխայեցել են ստամոքսա-աղբային հիվանդութեաններ, պետք է խմել յեռացրած ջուր:

1870
38



Յեռայրած ձեւով պետք է խմել նաև կաթը, քանի վոր հում կաթի միջոցով յերեխաները շատ հաճախ վարակվում են ստամոքսա-աղքային վարակիչ հիվանդություններով, թորախտով և այլն:

ԱՄԱՆԵՂԵՆ, ՈՒՏԵԼՈՒ ՊՐԻՌՈՐ

Կերակրի և ջրի մաքրության հետ միասին նշանակութուն ունի նաև ամանեղենի մաքրությունը: Ամանեղենը յուրաքանչյուր գործածելուց հետո պետք է լավ լվանալ և պահել փակ տեղում: Յերեխան սեղանի վրա իր առջև ուստի չհամար պետք է ունենա տոանձին աման և պրիբոր, դա չպետք է հասկանալ այնպես, վոր ուրիշները վոչ մի դեպքում չեն կարող ոգտվել այդ պրիբորից. ամբողջ ամանեղենները և պրիբորները կարող են ընդհանուր լինել, բայց չի թուլատրվում միաժամանակ ուստի ընդհանուր ամանից, ընդհանուր դրայով և այլն, քանի վոր այդ ձևով հեշտությամբ հաղորդվում են դանախան հիվանդություններ: Նրանից հետո, յերբ մեկն ու մեկն ոգտվել է ամանով կամ պրիբորով, պետք է նրանց լավ լվանալ տաք ջրում և միայն դրանից հետո նրանով կարող է ոգտվել ուրիշը: Պետք է համառ կերպով յերեխաներին ընտելացնել այդ հիմնական, սակայն հաճախ մոռացվող ստույգապահական կանոններին: Յեթե նման նախարդուչացումներն անհրաժեշտ են տանը, ապա նա ավելի շատ անհրաժեշտ է դրսում՝ գանազան հառաքակալան վայրերում: Հաճախ վարակի աղբյուր է հանդիսանում ընդհանուր դաշվաթը, ուստի պետք է լավ վողոզել այդպիսի դաշվաթը խմելուց. առաջ: Անհրաժեշտ է յերեխաներին

յետ վարժեցնել չափազանց ստորածված վնասակար սովորությունից՝ հետո մնալու ուղղակի խմել ջրմուղի ծորակից — նրան բունել շրթունքներով, վորովհետև այդպես հեշտությամբ կարող են հաղորդվել ստամոքսա-աղքային և այլ հիվանդություններ:

ԱՏԱՄՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ.

Ստամոքսա-աղքային հիվանդությունների նախադուշացման հետ կապված ընտելությանն է վերաբերվում նաև ստամների խնամքը: Յուրաքանչյուր յերեխա պետք է ունենա առանձին ստամի խոյանակ, գալաթ և այն պահի վորոչ տեղում, ավելի լավ է լվացարանի մոտ յեղած դարակում: Վորպեսզի ստամի խոզանակը չփոչոսվի, նրան պետք է պահել փակ պատյանում: Ատամները պետք է մաքրել որեկան յերկու անգամ — առավոտյան և յերեկոյան և այն ել վոչ թե մաքրել կողքից-կողք այլ վերից վայր, վորպեսզի մաքրվեն ստամի բոլոր ձեղքերը: Խոզանակը պետք է ընտրել կոշտը, վորպեսզի ավելի լավ մաքրել ստամների փառը և ամբանան լեղերը: Ատամները մաքրելուց հետո պետք է վողոզել բերանը և կոկորդը: Բերանը պետք է վողոզել նաև յուրաքանչյուր ուտելուց հետո: Յեթե չարհպանեղ այն կանոնները, ապա կերակրի մնացորդները կմնան ստամների մեջ, կլուծվեն և կհոտեն ու նրանց մեջ կառաջանան միկրոբներ, վորի հետևանքով կփչանան ստամները: Ատամների խնամքն ամենախարեխոր առողջապահական սովորություններից մեկն է, վորը համառ կերպով պետք է դաստիարակել յերեխաների մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Ձեռնարկ դպրոցական առողջապահութեան վե-
բաթերթյալ — պրոֆեսոր Ա. Վ. Մորկովի Խմբագրու-
թյամբ — Բժշկական հրատարակություն 1934 թիվ:

2. Ի. Ի. Միլման — Մանկատարական կուլտուրան
դպրոցում, ծրարների և դասադրքերի առողջապա-
հական մատերիալի անալիզը: Բժշկական հրատարա-
կություն — 1935 թիվ:

3*) Լ. Բ. Նիմեն—Առողջապահական դաստիարա-
կությունը դպրոցում: Բժշկական հրատարակություն
1933 թիվ:

4*) Ե. Ս. Գեվտեր — Ձրույցներ առողջապա-
հության մասին: Լենինգրադի բժշկական ինստիտուտի
հրատարակություն 1934 թիվ:

5*) Մ. Մ. Գրինբերգ—Ինչպես պահպանել յեվ
ամրացնել յերեխայի առողջությունը: Բժշ. հրատ.
1934 թիվ:

6.*) Մ. Մ. Գրինբերգ—Ինչպես դաստիարակել
առողջ յերեխային: Ուսուցչական մանկավարժական
հրատարակություն 1936 թիվ:

7. Մ. Ա. Ֆինն — Դպրոցական յերեխայի ու-
ժիժն ընտանիքում (տարրական դպրոց) Ուսուցչական-
մանկավարժական հրատ. 1936 թիվ:

Բ. ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Գրոմբալս — Դաստիարակենք դպրոցականների
մեջ մաքրության և մաքրատիրության ընտելություն-

*) Հիշված գրքերը պետքական են նաև ծնողների
համար:

ներ: Մոսկվայի սանիտարական կուլտուրայի ինստի-
տուտ — 1936 թիվ:

2. Գրոմբալս — Դպրոցական ընտանեկան առողջ
չրջապատ: Մոսկվայի սանիտարական կուլտուրայի
ինստիտուտ 1935 թիվ (առաջին հրատ.) 1936 թիվ
(2-րդ հրատ.):

Գ. ԳԻՏՈՂԱԿԱՆ ՆՅՈՒԹ.

«Դպրոցականի առողջապահական անկյուն: Հանուն
առողջ սոցիալիստական սերնդի»: Սերիա—14 պլա-
կատներից դպրոցների համար: Պետհրատ 1935 թիվ:

Լ. Ս. ԴԵՅՆԵՐ

(Մոսկվայի սանիտարական
կուլտուրայի ինստիտուտ)

**ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԻՄԱՆԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՅԵՐԵՍԱ-
ՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԸ ՎԱՐԱԿԻՉ ԶԻՎԱՆԳՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԶԻՎԱՆԳ ՅԵՐԵՍԱՆՆԵՐԻ
ԽՆԱՄԲԻ ՄԱՍԻՆ**

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն .

1. Զրույցի նպատակն է՝ դպրոցական հասակ
ունեցող յերեխաների համար ամենավտանգավոր վա-
րակիչ հիվանդութիւնների և այդ հիվանդութիւնն-
երի դեմ մղվող պայքարին-ծնողներին ծանոթացնե-
լու խնդիրները: Ըստ վորում նկատի յե առնվում, թե
դպրոցական յերեխային վարակումից նախազգուշաց-
նելու, և թե այն հիմնական միջոցառումները նրա հի-
վանդանալու դեպքում, վորի նպատակն է մյուս յե-
րեխաներին նախազգուշացնել վարակվելուց և հիվան-
դութիւնը դպրոց տեղափոխելուց, ինչպես նաև տա-
նը հիվանդ յերեխային խնամելը:

2. Նկատի ունենալով խնդրի հատուկ բնույթն
ավելի ցանկալի յե, վորտեսողի գրույցները (կամ մի
չարք գրույցներ) տանի դպրոցի բժիշկը՝ վարակիչ
հիվանդութիւնների դեմ մղվող պայքարի մասին:
Սակայն գործնական շատ դեպքերում պետք է
հաշիվ առնել դպրոցական հատուկ բժշկի բացակա-
յութիւնը, հատկապես գյուղերում: Այն ինչ հաճախ
արտակարգ անհրաժեշտութիւն և ծաղում ծնողներին

տալու հարկավոր բացատրութիւնները՝ հաճախակի
հիվանդութիւնների տարածումը կանխելու և մյուս
դպրոցականներին չվարակելու համար: Ուստի
դպրոցն այդ դեպքերում պետք և իր ուժերով կանգ-
մտակերպի գրույցներ ծնողներին հետ՝ վարակիչ հի-
վանդութիւնների մասին: Ըստ վորում պետք է կանգ
առնել մոչ միայն թետրետիկական կողմի վրա, վորը
սովորաբար դերակշռում է բժշկական սանիտարական
բրոշյուրներում (հիվանդութեան պրոգնոզի, պարտի
ժամանակաշրջանը, հիվանդութեան պատկերը յեւ
այլն), վորքան դիտավորապես, պարզ և մատչելի մի-
ջոցառումների վրա՝ հիվանդութեան նախազգուշաց-
ման և հիվանդների խնամքի նկատմամբ: Յեթե գրույ-
ցին կցվող կինոսպեկտում յուրաքանչյուր հիվանդու-
թեան նկատմամբ ավելի լրիւ տեղեկութիւնները, հա-
մենայն դեպք անց են դառնալ՝ այն պատճառով, վոր
մանկավարժին իրեն անհրաժեշտ և դրամուկ վրոզմ-
նորոշիւնը, գոնե անգամ առանձին ծնողներին հնարա-
վոր հարցերին պատասխանելու համար:

3. Այն դեպքում, յերբ վարակիչ հիվանդութիւն-
ների մասին հիմնական գրույցը տարված է բժշկի
կողմից, այդ միանշամայն չի բացատում, այլ լնդ-
հատուտալը, ամբողջում է մանկավարժի կողմից
ծնողներին տրված տեղեկութիւնների հետագա խո-
քացումը — և այն ել հատկապես ծնողների պրակ-
տիկ խնդիրների հատվածով — վարակի հետագա
առաձման նախազգուշացման համար: Հետեւապես և
այդ դեպքում տվյալ գրույցի նյութը կարելի յե ոգ-
տապարծել:

4. Չրույցի ամենադարևոր արդյունքներից մեկը պետք է հանրապանա ծնողներին ներգրավել դպրոցում—վարակիչ հիվանդություններին դեմ պայքարի գործնական ոժանդակութեան: Մրան են վերաբերում՝ յերեխաների սանիտարական հետազոտումներին մասնակցելը, դպրոցի շենքի սանիտարական դիտումներին մասնակցելը, յերեխաներին բաց թողնվող կերակրի սանիտարական դրութեան հետեւելը և այլն: Ասելի լավ է գրույցը վերջացնել դպրոցի կողմից վարակիչ հիվանդությունների դեմ ձեռք առնելիք պայքարի միջոցառումներին հաղորդամբ:

ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՆՍՊԵԿՏԸ .

Վարակիչ կամ ինֆեկցիոն («ինֆեկցիա» — վարակ բառից) կոչվում են այնպիսի հիվանդությունները, վորոնք տարածվում են որդանիցմի մեջ շատ մանր կենդանի էյակների — միկրոբների ներմուծման հետեւանքով: Միկրոբները հասարակ աչքով անտեսանելի յեն: Նրանց կարելի յե տեսնել միայն բարդ պրիբորի միջոցով, վորոնք կազմված են մեծ ուժ ունեցող խոշորացույցներից: Յերբ միկրոբներն ընկնում են մարդու որդանիցմի մեջ, նրանք այնտեղ չափազանց արագ են բազմանում, սկսում են արտադրել հատուկ նյութեր և արդարիտով մեծ վնասներ են պատճառում որդանիցմին: Իրա հետևանքով դարդանում է վորոչ հիվանդություն, վորը կախված է նրանից, թե ինչպիսի միկրոբ է ընկել որդանիցմի մեջ: Գիտությունը դեռևս չի դտել բոլոր վարակիչ (ինֆեկցիոն) հիվանդությունների դրդուիչները, սակայն բոլոր վարակիչ հիվանդությունների նշաններն

ուսումնասիրված են և հայտնի յեն բժիշկներին: Յեթև վորեն վարակիչ հիվանդություն վորոչ ժամանակամիջոցում ուժեղ տարածվում և տվյալ վայրում և մասսայական բնույթ է կրում, ապա խոսում են համաճարակի մասին:

Նախահեղափոխական Ռուսաստանում համաճարակները (խոլերան, բժավոր տիֆը, վորովայնային տիֆը) մշտական յերեվութե էյին և տանում էյին դեպի աղքատնակութեան հսկայական մասսաների վորջնջացում: Խորհրդային Միութեյունում ընդհանուր առողջացումը խորհրդային իշխանութեան կողմից հակահամաճարակային հատուկ միջոցառումներ կիրառելու հետ միասին հանդեյին նրան, վոր մենք այլևս խոլերա չգիտենք, ծաղկով հիվանդանալը նույնպես համարյա դադարել է, վարակիչ հիվանդությունների տարածման մեծ մասը կրճատվել է Յ-Մ անդամ: Նախահեղափոխական շրջանի համեմատութեամբ մանկական ընդհանուր մահացությունը պակսել է համարյա յերկու անգամ, մահացությունը գիջտերտից պակսել է 5 անգամ, կարմրութեից՝ 2 անգամ և այլն:

Իայց այդ չպետք է տանի դեպի ինքնահանդատացում: Մի շարք վարակիչ հիվանդություններ դեռ ևս չեն վերացված. նրանք դեռ սպառնում են մեր յերեխաների առողջութեանը: Անհրաժեշտ է վորպեսզի ծնողները դպրոցի հետ միատեղ ախտիվ պայքար մղեն խորհրդային դպրոցականների առողջութեան համար, ընդդեմ վարակիչ հիվանդությունների:

Տվյալ գրույցի մեջ խոսք կլինի դպրոցական յերեխաների վարակիչ հիվանդությունների մասին: Յե-

րեխաներն առանձնապես հաճախ հիվանդանում են՝ քուժեչով, դիֆտերիայով, կարմրուկով, կարմրատապով, խոզուկով, ջրծաղիկով. այդ հիվանդությունները հաճախ կոչվում են մանկական վարակիչ հիվանդություններ: Մահալյն յերեխաները կարող են հիվանդանալ և այնպիսի հիվանդություններով, ինչպիսին են՝ գրիպը, վորտլայնային տիֆը և այլն: Մանկական վարակիչ հիվանդություններից առանձին ուշադրություն պետք է դարձնել դիֆտերիայի և քուժեչի վրա: Հասակավոր մարդիկ նույնպես կարող են հիվանդանալ, այսպես կոչվող մանկական վարակիչ հիվանդություններով, սակայն դորձնականում դա համեմատաբար քիչ է պատահում:

Կան մի շարք ինֆեկցիոն հիվանդություններ, վորոնցով հավասարապես հիվանդանում են թե յերեխաները և թե մեծահասակները: Որինակ՝ ծաղիկը, գրիպը: Տիֆերը հաճախ յերևում են մեծահասակների, քան յերեխաների մոտ:

ԴԻՖՏԵՐԻԱ.

Դիֆտերիայով հիվանդանալը նկատվում է տարվա բոլոր յեղանակներին, բայց վորոչ վերելք ստիտրաբար ընտում է աշնանը և ձմռանը. ամառը հիվանդների թիվը պակասում է: Դպրոցականների հիվանդանալը տեղի յե ունենում, չնայած նրան, վոր յերեխաներն ավելի հաճախ հիվանդանում են—մեկից մինչև 5 տարեկան հասակում: Յերեխաները չարտադանց գզայուն են դեպի այդ հիվանդությունը:

Դիֆտերիայով վարակվում են՝ դիֆտերիայով հիվանդների կամ դիֆտերիայով հիվանդացած ու սողո-

ղացածի հետ շփում ունենալուց: Գոյություն ունենալու առաջին կողմը բացառապես յարդ, այսինքն առողջ մարդիկ, վորոնք իրենց մարմնում, ամենից շատ բերանի խոռոչում կրում են միկրոբներ, վորոնք կարող են առաջացնել դիֆտերիա հիվանդությունը: Այսպիսի մարդիկ հեշտությամբ մարակում են չրժապատողներին: Կարելի յե նամանապես վարակել նաև իրերի միջոցով, վորոնցով ոգտվել է հիվանդը, ինչպես նաև սննդամթերքների միջոցով: Դիֆտերիայի ցուպիկը կարող է բնակվել բերանի խոռոչում, կոկորդում, ըթում, բերանում և այլն: Ամենից շատ նա մտնում է բերանի խոռոչիկամ կոկորդի ըորձաթաղանթի մեջ: Որդանիզմի մեջ միկրոբը մտնելու մոմենտից և մինչև հիվանդության առաջին նշանների յերևալը սովորաբար անցնում է 2-3 օրից մինչև մեկ շաբաթ. այդ ժամանակամիջոցը կոչվում է հիվանդության գաղտնի ժամանակամիջոց:

Հիվանդության սկզբում նկատվում է ընդհանուր թուլություն, ախորժակի բացակայություն յեպ հետ ջերմաստիճանի բարձրացում. մեկ օրից հետո ցավ է գզացվում կուլ տալիս, բերանի խոռոչում սիտ է լինում և ուռում են պարանոցի դեղձերը:

Ահա թե ինչպես է նկարագրում վերեսալիք դիֆտերիայով հիվանդ յերեխային իր «Թժկի գրությունները» հայտնի գրքում:

... «Դա մի տղա յեր ուռած թչերով և հրաշալի կապույտ աչիկներով: Նա չնչում եր ծանր ու խտիտ, ոնկողնու մեջ ուժեղ դես ու դեն եր ընկնում դեղնած — կապտավուն դեմքով, ներս քաշվող միջկողերով»:

Դիֆտերիան կարող է մի շարք բարդութիւններ առաջացնել: Իրանց են վերաբերվում սրտի խանգարումները, յերիթամուքների հիվանդութիւնը, անդամապոստութիւնը և այլն: Բժշկութիւնն իր տրամադրութեան տակ հիվանդներին բժշկելու համար ունի հաստատ միջոց. հակադիֆտերիտային շիջուկի սրբակում: Շիջուկի կիրառումը զգալի չափով իջեցնում է մահացութիւնը դիֆտերիտայից և ողնում է արագ առողջացմանը: Սակայն դրա համար անհրաժեշտ է վորքան կարելի յե շուտ սրտիկ շիջուկը: Յուրաքանչյուր որ և անգամ ժամ այտեղ մեծ նշանակութիւն ունի: Նախկին ժամանակներում, յերբ չգիտեցին հակադիֆտերիտային շիջուկը, դիֆտերիան շատ ավելի վտանգավոր հիվանդութիւնն էր, քան հիմա: Այն ժամանակ, սրինակ, մահը վրա յե հասնում խեղդումից. այդպիսի ծանր դեպք է նկարագրում Վերեսայեվը վերը բերած հատվածում:

Հիվանդութիւնից պաշտպանվելու համար դործ է անվում պատվաստումը: Պատվաստված յերեխաները դիֆտերիտայով հիվանդանում են 10 անգամ քիչ չպատվաստվածներից, իսկ մահվան դեպքեր պատվաստվածների մեջ համարյա չի լինում: Ուստի ծնողները պետք է ամեն կերպ ողնեն պատվաստմանը: Իս ամենաճիշտ միջոցն է նրա համար, վորպեսպէ ազատվել դիֆտերիտայից փերջնականապես: Բոլորը գիտեն, թե ինչպես մենք ազատվեցինք ծագից, շնորհիվ նրա դեմ պարտադիր պատվաստումների կիրառմանը: Իսկ չե վոր ծագիկը յեղել է սարսափելի հիվանդութիւն, վորը հարկածել է շատ ու շատ մարդկանց:

Քանի վոր դիֆտերիան վարակիչ հիվանդութիւնն է, ապա անհրաժեշտ է հիվանդացած յերեխային ուղարկել հիվանդանոց: Իս կրկնակի ուղտակար է: Մի կողմից յերեխան հիվանդանոցում կուսենա ճիշտ խնամք, բժշկութիւն, բժշկի հսկողութիւն, մյուս կողմից — դրանով պաշտպանվում են մյուս յերեխաները՝ վարակումից: Բնակարանի նկատմամբ՝ վորտեղ յեղել է հիվանդը, և նրա բնակիչները, առանձնապես յերեխաների նկատմամբ, բժշկները սովորաբար նշանակում են կարանտին: Կարանտինն արտահայտվում է նրանում, վոր վորոշ ժամանակաշրջանում բնակիչներին — նախ և առաջ բոլոր յերեխաներին արգելվում է այցելել մանկական հիմնարկները, իսկ հաճախ և ուրիշ տեղեր, վորտեղ նրանք կարող են վարակը հաղորդել այլ յերեխաների: Մինչև արտահանում կատարելը կողմնակի անձանց արգելվում է այցելել այն բնակարանը, վորտեղ յեղել է դիֆտերիտայով հիվանդը: Այդ միջոցառումները շատ կարեւոր են. նրանք կասեցնում են հիվանդութեան հետագա տարածումն, ապա ծնողները պարտաւոր են խստիվ պահպանել բժշկի բոլոր պատկերները և թույլ չտալ իրանգարելու կարանտինը: Յեթե յերեխաները շիջել են դիֆտերիտայով հիվանդի հետ, ապա չի կարելի նրանց դպրոց թողնել այնքան ժամանակ, քանի դեռ չի պարզվել, վոր նրանք նույնպես չեն վարակվել հիվանդից: Այդ նպատակի համար բժիշկները սովորաբար լաբարատորիա յե ուղարկում հետազոտման համար բերանի լորձուէրը (2 անգամ): Միայն նրանից հետո, յերբ լաբարատորիան պարզի, վոր յերեխայի բերանի խոռոչում չկան դիֆտերիտայի ցուպիկներ յեվ

յեթե վորոչ որեք անցնելուց հետո յերեխան չհիվանդանա, ապա նրան կարելի յե թույլ տալ դպրոց գնալ և շնորհը ուրիշ յերեխաների հետ:

Առողջանալուց և հիվանդանոցից դուրս գրվելուց հետո այդ յերեխաները նույնպես պետք է դպրոց վերադառնան միմիայն նրան բժշկող կամ սանիտարական բժշկի թույլտվութունն (տեղեկանք) ստանալուց հետո:

Վերջում մի քանի խոսք դեղինֆեկցիայի (ախտահանման) մասին: Դիֆտերիայի ցուպրիկը գտնվում է բերանի և քթի լորձուեղում, թքում բերանի խոռոչի դիֆտերիային փառում: Դեղինֆեկցիայի յենթակայեն՝ հիվանդի արտաթորութունը, ամանեղենը, վորով նա ոգտվում է, կերակուրի մնացորդները, գիշերանոթը, սպիտակեղենը, անկողնու պարագաները, մահճակալը, գրքերը, խաղալիքները: Աղբը և քիչ արժեք ունցող խաղալիքները ավելի լավ է այրել: Պետք է այրել նաև վաթաթանները (բիտերը, բամբակը և այլն): Հիվանդին խնամող անձինք — յեթե հիվանդը տանն է մնացել — պետք է իրենց ձեռքերը՝ հիվանդին, նրա սպիտակեղենին և արտաթորութուններին կպցնելուց հետո լավ լվանան:

Հիվանդին խնամողները պետք է վրեն հասուկ խալաթ և հանեն ամեն անգամ հիվանդի սենյակից դուրս գալու ժամանակ: Ախտահանման անհրաժեշտության մասին մանրամասն ցուցմունքներ յուրաքանչյուր անգամ տալիս է բժիշկը:

Քուլթեչով կարելի յե վարակվել հիվանդունը կամ նրա խրերի հետ (խաղալիքներով, գրքերով և այլն) չլի վերու միջոցով, սննդամթերքներով կամ կաթի միջոցով: Ամենից շատ հիվանդանում են 3-10 տարեկան յերեխաները: Քուլթեչով հիվանդանում են ստարվար յուր յեղանակներին. աչնանը և ձմռանը հիվանդութունները սովորաբար ուժեղանում են: Քուլթեչով հիվանդն ուրիշներին համար վտանգավոր է վտչ միայն ամբողջ հիվանդության ընթացքում, այլ նույնիսկ միջև հիվանդության նշաններով յեկուսայր: Դեռ ավելին — հիվանդութուն կրած յերեխաները կարող են վորոչ ժամանակ բերանի խոռոչում կրել քութեչի միկրոբներ: Նույնը կարելի յե դիտել այն յերեխաների մոտ, վորոնք դեռ չեն հիվանդացել: Այդպիսի անձիք կոչվում են բացիլատներ, վորի մասին մենք արդեն հիշատակել ենք, յերբ խոսում էինք դիֆտերիայի մասին: Քուլթեչի դրդուիչը ներս է մտնում մարդու որդանից մեջ բերանի խոռոչի միջոցով: Քուլթեչով մարդ կարող է կյանքում հիվանդանալ միայն մեկ անգամ, քանի վոր հիվանդութունից հետո մնում է կայուն ազդայնականութուն (խմունկիտետ):

Ինչպես յուրաքանչյուր վարակիչ հիվանդութուն — քութեչն էլ վարակումից անմիջապես հետո չի յերեվում: Յերբ միկրոբները ներս են մտնում որդանից մեջ, նրանց հարկավոր է վորոչ ժամանակ (հիվանդության դադանի ժամանակաշրջանը) նրա համար, վորպետի բաղմանն, վորից հետո նրանք սկսում են թունավորել որդանից արատազրոյ

Թու յներով: Գազտնի ժամանակաշրջանը քուժեչի համար հախասար և միջին հաշվով 5-6 որվա, սակայն կարող է շարունակվել մինչև 12 որ: Քուժեչն սկսվում կոկորդի ցավով, տաքությամբ, հաճախ սիրտ խառնելով և սիրտ յետ տալով: Բերանի խոռոչի նշագեղձերի և փայտուկ քմքի յորձաթաղանթը քնայունում և բաց կարմիր դույն, փակ լեզվի վրա յերևում և ուսած ծծակներ (այսպես կոչվող «մորիի լեզու»):

Քուժեչի ցանը վորը դուրս է գալիս սովորաբար Հիվանդության յերկրորդ որը, բազկացած և մանր կետերից, դրանով նա տարբերվում և կարմրուկի ցանից (բծերից), վորտեղ ցանը բազկացած և մութ վարդագույն կամ բաց վարդագույն բծերից: Քուժեչի դեպքում շրթունքները և կզակը դեղնած են մնում, փակ թշերն աչքի յեն քնկնում վառ գույնով: Քուժեչով Հիվանդի ջերմությունն արագ բարձրանում է մինչև 40-41 աստիճան, իսկ 4-5 որից հետո սկսում է իջնել:

Վորպես քուժեչի ամենահասականչական նշան կարելի չէ ցույց տալ կաշվի թեփոտումը: Նա սովորաբար սկսվում է բծերն անհետանելուց յերկու շաբաթ հետո. մարմնի և վերջավորությունների կաշին մեծ շերտերով թեփոտվում է: Հիվանդության ընթացքը կարող է բարդանալ յերիկամուքների, ակտնի և այլ Հիվանդություններով: Հաճախ պատահում են այսպես կոչվող ջնջված դեպքեր — վոչ տիպիկական, թույլ արտահայտված, ջիչ նկատվող ցանով, տաքության աննշան բարձրացումով և այլն: Այդ դեպքերն առանձնապես վտանգավոր են, քանի վոր նման դեպ-

քերում Հիվանդությունը կարելի չէ շնկատել, այն ինչ շրջապատին վարակելու նկատմամբ նրանք ջիչ վտանգ չեն առաջացնում, քան թացորոշ այրուհայրս ված ձեկերը:

Հիվանդը պետք է տեղավորվի Հիվանդանոցում, վորտեղ նրան կապահովվի ճիշտ խնամք, բժշկական հսկողություն և անհրաժեշտ բժշկություն: Բացի դրանից Հիվանդին Հիվանդանոց տեղավորելով հույն բնակարանի և տան յերեխաներին սիրկում է վարակման վտանգից: Վարակը կանխելու համար բժիշկը կարանտին է նշանակում, վորի հիման վրա վորոշ ժամանակամիջոց արգելվում է Հիվանդի հետ չլինել մեջ յեղած յերեխաներին դնալ դպրոց և իրենց մոտ բնորոնել բնիկներին ու հյուրերին, նույնպես յեվ մեծահասակներին՝ այցելել մանկական հիվանդանոցները: Մինչև ախտահանում կատարելը վոչ վոք չպետք է հաճախի այն բնակարանը, ուր գտնվել է քուժեչով Հիվանդը: Մտողները պետք է խստիվ հեռուեն կարանտինի կանոնների կատարմանը: Անհրաժեշտ է հատկապես խստիվ կատարել բժշկի ցուցմունքներն այն դեպքերում, յերբ Հիվանդը բժշկվելու համար թողնված է տանը: Հիվանդին պետք է հատկացվի առանձին սենյակ, առանձին ամանեղեն և սպիտակեղեն: Հիվանդի սենյակը պետք է մուտք ունենան միայն 1-2 հոգի, վորոնք խնամում են Հիվանդին: Այդ անձինք պետք է խալաթ կրեն, Հիվանդի սենյակից դուրս դալու ժամանակ հանեն խալաթը, ձեռքերը մաքուր լվանան և վորքան կարելի չէ ջիչ չլինել մեջ լինեն առողջ մարդկանց հետ: Քուժեչից պաշտպանվելու համար գոյություն ունեն պատվաստումներ,

վորոնք հարկ յեղած դեպքերում կատարվում են բր-
տիչիներէ կողմից :

Առողջանալուց և հիվանդանոցից դուրս դրվելուց
հետո յերեխաներին անախճապես չեն թուլցատրուած
դպրոց հաճախել: Ծնողները պարտավոր են ուշա-
դրութեամբ հսկել, վորպեսզի յերեխաները դպրոց
վերադառնան միայն նրան բժշկող կամ սանիտարա-
կան բժշկի գրավոր թուլցութեանն (տեղեկանք)
ստանալուց հետո :

Ինչ վերաբերվում է արտահանմանը, սպա հիմ-
նանականում պետք է առաջնորդվել այն ցուցմունք-
ներով, վոր արված է դիֆտերիայի նկատմամբ :

ԿԱՐՄՐՈՒԿ.

Կարմրուկով հիվանդանում են գլխավորապես 1—4
տարեկան յերեխաները: Դպրոցական հասակում յերե-
խաները համեմատաբար հազվագյուտ են հիվանդա-
նում, բայց համենայն դեպս սրտահում են դպրոցա-
կաններէ հիվանդանարու դեպքեր, հատկապես մինչև
10 տարեկան հասակը:

Կարմրուկը շատ վարակիչ է: Վարակման համար
բավական է շատ կարճ ժամանակով գտնվել այն սեն-
յակում, վորտեղ գտնվում է կարմրուկով հիվանդը
կամ նրա հետ ունեցած կարճ հանդիպումը: Սակայն
կարմրուկի վարակն ավելի քիչ և մայրուն քուլթելի և
դիֆտերիայի վարակի համեմատութեամբ, արագու-
թեամբ միջնապահում և չորացումից և արևի լույսից:
Բառակական և լսով ողավոխել ու մաքրել սենյակը, վոր
տեղ գտնվում է հիվանդը, վորպեսզի նրան անվտանգ
գարձնել:

Հիվանդութեանը սովորաբար սկսվում է նույն
ցավերով՝ դիսացամ, կոկորդացամ՝ կերակուր կու-
տալիս, հարբուխ, հազ, տաքութեան: Հաճախ յերե-
վում է աչքերի բորբոքում — կարմրութեան, լուսա-
վախ: Յերեխան ցավ է դրում լույսին նայելուց:

Կարմրուկի ժամանակ, ի տարբերութեան քուլթե-
լի և դիֆտերիայի, յերեխային հիվանդանոց տեղափո-
խելը մեծ մասամբ պարտադիր չէ. ավելի կարևոր
է ծնողներին լիմանալ յերեխայի խնամքի կանոնները:

Նախ և առաջ անհրաժեշտ է կատարել բժշկի բու-
րոյ ցուցմունքները: Զանազան դեպքերում հիվանդու-
թեանը կարող է տարբեր ընթանալ, ուստի բժշկու-
թեանն ևլ կարող է տարբեր լինել նայած հիվանդի
գրութեանը: Ծնողներէ համար կարևոր է հիշել հե-
տևյալը.

Հիվանդ յերեխային անհրաժեշտ է պառկեցնել
անկողնում, իսկ մնացած առողջ յերեխաներին ան-
միջապես հեռացնել այն պենյակից, վորտեղ
պառկած է հիվանդը: Վորոչ ծնողներ գտնուած են, վոր
միլենույն է, կարմրուկով բոլորը պետք է հիվանդա-
նան, ուստի անհրաժեշտ չէ մյուս յերեխաների մե-
կուսացումը: Դա ճիշտ չէ: Ճշմարիտ է, կարմրու-
կով հիվանդանում են համարյա բոլորը, սակայն յե-
րեխաները վորքան ուշ հիվանդանան կարմրուկով,
այնքան լսով և, — ավելի ծանր են կրում այդ հիվան-
դութեանը մինչև 4 տարեկան հասակի փոքր յերե-
խաները: Յեթե յերեխան ուշ է հիվանդանում կարմր-
րուկով, նա ավելի հեշտութեամբ է կրում հիվանդու-
թեանը, ուստի հարկավոր չէ արագացնել յերեխայի
կարմրուկով հիվանդանալը:

Հիվանդի սենյակը տարվա բոլոր յեղանակներին պետք է լավ ուղտիտխել: Լավ է, յեթե սենյակը լուսավորվում է արեգակի ուղիղ ճառագայթներով: Արեգակի լույսը վնչնչացնում է վարակը: Լուսամուտները վարագուրել և մթնացնել սենյակը, ինչպես հաճախ անում են շատերը, հարկավոր չէ, յերեխայի աչքերի բորբոքման դեպքում բավական է վարագուրել մահճակալ և նրանք քնել ափսոս, վտարեպղի լույսը չընկնի յերեխայի աչքերի մեջ: Արեգակից դրկելը, մթուշթյան մեջ պառկելը, արդելը և հանդիսանում յերեխայի շուտ առողջանալուն: Պետք է սենյակից դուրս տանել ավելորդ առարկաները, լավ մաքրել սիտիկն խոնավ լաթով, հետևել մաքրությանը: Հիվանդության 4-5-րդ օրերը սովորաբար յերեւում է ցանք: Նրա տարբերությունը քութեչի ցանից այն է, վնք կարմրուկի ցանն սկսվում է յերեսից և միայն հետո անցնում մարմնին ասրա ցանի բծերն արագ միանում են իրար ու դառնում մեծ բծեր: Սովորաբար 3-րդ, 4-րդ ցանն սկսում է գունաստիկ և հետզհետե անհետանում է. այնուհետև սկսում է թեփոտում — մանր թեփերով, և վնջ թե մեծ շերտերով, ինչպես քութեչի ժամանակ:

Մեծ նշանակություն ունի հիվանդ յերեխայի համար ճիշտ և բավարար սնունդը: Գլխավորապես հիվանդության սկզբում պետք է կերակրել հիվանդին հողով և կիսահողով (վոչ յուղայի) կերակրով (կաթ, կաշաներ, կիսել, կոմպոտներ), այնուհետև ընդհանուր դրության բարելավումից հետո — կերակրել ավելի աննդատու կերակուրներով (մսի բուլյոն, բանջարեղեն, ծեծված միս, մրգեղեն և այլն): Յուրաքանչեք

չյուք հիվանդի պահանջվող սնունդը, նայած նրա դրության և հիվանդության ընթացքին, կարող է ցույց տալ միայն բժիշկը:

Հիվանդ յերեխան պետք է ամեն օր դուրս գնա (այստաքնոց): Կապ լինելու դեպքում պետք է վրիպմանն, լուծող դեղերից պետք է խուսափել:

Ուժեղ տաքության դեպքում գլխին դնել սառցով լի փամփուշտ կամ սառը ջրի մեջ թրջած սրբիչ:

Մաշկն ամեն օր պետք է շիւղ տաք ջրով և հաճախ փոխել սպիտակեղենը:

Բերանը վողողել դոլ-յեռացրած ջրով, հատկապես յուրաքանչյուր ուտելուց հետո, մաքրել առամները, սրբել աչքերը բամբակով թացացրած թույլ բորբոքուծութի մեջ (մեկ թեյի գդալ մեկ բաժակ ջրի):

Չպետք է համբուրել հիվանդ յերեխային. համբուրի հետ կարելի չէ նրան հաղորդել այլ հիվանդությունների վարակներ՝ դիֆտերիայի, քութեչի, գրիպպի և այլն, փոկ յերկրորդ անգամ հիվանդանալ վարակիչ հիվանդություններով՝ որպանիգմի ուժեղ թուլությունից անմիջապես հետո, շատ վտանգավոր է յերեխայի համար:

Կարմրուկի դեպքում, ինչպես նաև այլ վարակիչ հիվանդությունների ժամանակ, հնարավոր են բարդություններ. նրանք սկզբում կարող են լինել թեթեւ: Սրան են վերաբերում՝ բրոնխիտը, թոքերի բորբոքումը, ախանջի բորբոքումը և այլն: Բարդացումների նախազգուշացման համար մեծ նշանակություն ունի մի կողմից՝ բժշկի կանոնավոր հաճախումը վոչ միայն սուր արտահայտությունների՝ տաքության և ցանի ժամանակ, այլև հիվանդության

առաջին արեքը, իսկ մյուս կողմից հիվանդի լամ-
խնամքը, վորի մասին մենք արդեն խոսել ենք:

Շատ ցանկալի յե յերեխային ժամանակ առ ժա-
մանակ ցույց տալ բժշկին — մոտավորապես մի
քանի ամսվա ընթացքում: Արդյոք կարմրուկի հետե-
վանքները նորից չեն արտահայտվում:

Կարմրուկով հիվանդացած յերեխային կարելի յե
թույլ տալ շփելու առողջ՝ կարմրուկով չհիվանդա-
ցած յերեխաների հետ մի շաբաթից հետո — (յեթե
բարդություններ չեն առաջացել): Հիվանդացած յե-
րեխային անկողնից իջեցնելը հանձնարարվում է մի-
այն բժշկի թույլտվությամբ, համենայն դեպս յեր-
կու-յերեք որ սովորական տաքություն ունենալուց
հետո: Վորպես կանոն՝ կրկնակի հիվանդացում տե-
ղի չի ունենում. կարմրուկով հիվանդացող մարդը
ձեռք է բերում անդդալություն դեպի այդ հիվան-
դությունն իր ամբողջ կյանքում:

Կարմրուկի նախադդուշացման համար կա հակա-
կարմրուկային շիջուկ, վորը պատրաստվում է կարմ-
րուկով հիվանդացած մարդկանց արյունից:

Կարմրուկի դեմ պատվաստումներ են կիրառվում,
գլխավորապես փոքրահասակ (մսուրային) յերեխանե-
րի նկատմամբ: Պատվաստումը նախադաշտականում է
հիվանդանալուց, կամ զգալի չափով թնթեմիացնում է
հիվանդության ընթացքը՝ կարմրուկն ընթանում է
հեշտ ձևով և քիչ բարդություններ է առաջացնում:

Պատվաստումներն արդեն մի շարք տարիներ կի-
րառվում են և փրկել են հազարավոր յերեխաների
կարմրուկով հիվանդանալուց, ծանր բարդություննե-
րից և մահից:

Իրիպպի հիվանդության դեպքերը լինում են թե
առանձին հիվանդության դեպքերով և թե բունկում-
ներով, վորոնք ընդգրկում են ամբողջ պետություն-
ներ կամ անդամ ամբողջ աշխարհամասեր:

Հիվանդությունը սովորաբար սկսվում է ցափե-
րով, տաքության արագ բարձրացումով և դիֆազալով:
Հնարավոր են բարդություններ, ինչպես որինակ, թո-
քերի բորբոքում և այլն:

Հասակավոր մարդկանց մոտ հիվանդությունը
կարող է ընթանալ հաճախ միայն հարբու-
խի ձևով: Այսպիսի մարդն յորեն հիվանդ չհամա-
րելով, կալույց և մարակել յերեխային: Գրիպպի
դադմունի ժամանակաշրջանը շատ կարճ է տևելում—
հատասար և մեկից յերեք որվա: Հիվանդությունը
յերկարում է, սկսած մի քանի որից մինչև մի քանի
շաբաթ, նայած ծանրությանը: Պետք է հիվանդին
պահել, ինչպես մյուս բոլոր հիվանդությունների ժա-
մանակ, բոտ հնարավորին լամ մաքրության մեջ.
ոգտակար է շփել նրան սենյակի ջեղմատիճանի ջրով,
հատկապես քրոնելուց հետո. վորքան կարելի յե
հաճախ ողբախոսել սենյակը:

Վորպիպի պահպանվել գրիպպից, պետք է ափե-
լի շատ ժամանակ անցկացնել թարմ ողում՝ արելի
լույսի ժամանակ: Պարբերաբար, վոչ պակաս՝ որա-
կան 2 անգամ, ողախոսել բնակարանը, պահպանել
ընդհանուր մաքրություն: Գրիպպի բժշկությունը
մեծ մասամբ կատարվում է տանը: Միայն լուրջ բար-
դությունների առկայության ժամանակ են հիվանդին
ուղարկում հիվանդանոց: Ուստի գրիպպի ժամանակ,

այնպէս, ինչպէս և կարմրուկի ժամանակ, շատ մեծ է տնային խնամքի դերը: Կարելի չէ ասել, վոր հոգատար խնամքն ամենազլխավորն է դրիպալի բուժման ժամանակ: Կարմրուկով հիվանդ յերեխայի խնամքի առթիվ ասվածի մեծ մասը վերաբերվում է դրիպալի խնամքին (բացի աչքերի հատուկ խնամքից, քանի վոր դրիպալի ժամանակ աչքերի հատուկ դրբութեամբ չի նկատվում): Յանկալի յե հիվանդին հատկացնել առանձին սենյակ, հեռացնել այգտեղից բոլոր ատոլջներին: Ըստ հնարավորութեան այդ սենյակը պետք է լուսավոր լինի, լուսավորված արևի ճառագայթներով և լավ ոդափոխվի: Մայրահեղ դեպքում ընդհանուր սենյակում հիվանդին հատկացվում է անկյուն լուսամուտի մոտ կտրված շերմայով կամ վարդուշրով:

Հիվանդ յերեխայի խնամքի համար առանձնացվում է մեկ անձնավորութուն, ավելի լավ է մյուսներին թույլ չտալ հիվանդին մերձենալ, վորպէսզի նրանց չենթարկել վարակման վտանգին: Հիվանդի սենյակում պետք է մաքրութուն պաշտպանել՝ մաքրել փոշին խոնամ ձևով, հետեւիլ յերեխայի մաքրութեանը, չփել նրան գոլ ջրով, վորողել բերանը: Խիստ տաքութեան ժամանակ զլխին ստոցով լի վտամուշտ դնել կամ տաք ջրի մեջ թրջած սրբիչ, վորը պետք է պարբերաբար փոխել: Հետեւիլ ստամոքսի պարբերական մաքրմանը. կապ լինելու դեպքում՝ կլիզմա անել: Մանրամասն ցուցմունքներ, ըստ հիվանդութեան ընթացքի, կարող է տալ միայն բժիշկը:

Վտամոք շատ թեթևով ևն վերաբերվում դեպի դրիպալը, նրանք դրիպալը լուրջ հիվանդութունն չեն համարում: Դա շատ մեծ սխալ է: Դրիպալը հաճախ

հեշտ և անցնում, անպատ աննկատելի, վտաքի վրա, սակայն հաճախ նա տարլա և նայել ծանր բարդացումներ: Առանձնապէս վտանգավոր և անկողնից շուտ վերկենալը դրիպալով հիվանդանալուց հետո. դրա սրտածառով լինում են՝ բարդութուններ թոքերում, սրտում, յերիկամութեանում: Բացի սրտանից, հնարվոր է դրիպալից հետո սկիանջի բարբոքում, ուղիղի թաղանթի բորբոքում և այլ հիվանդութուններ: Ուստի նախ քան յերեխային անկողնից լեղցնելը, անհրաժեշտ է խորհրդակցել բժիշկի հետ և համեմատել դեպի յերեխային անկողնում պահել վոր պակաս 2-3 ուր նորմալ տաքութեամբ:

Յեթե դրիպալը ձգձգվում է, բարդացումներ է տալիս, կամ յեթե նա հենց սկզբից ծանր է ընթանում, կամ վերջապէս, յեթե յերեխային թույլ է ատոլջութեամբ, նրան չպետք է տանը թողնել, այլ ուղարկել հիվանդանոց:

Ինչ վերաբերում է բնակարանի և իրերի ախտահանմանը, ապա դրիպալից հետո*) անհրաժեշտութեան չկա հատուկ վարակահանման, քանի վոր դրիպալի և կարմրուկի միկրոօրգանիզմն արագ վտնջանում են լույսի և չորութեան ազդեցութեան տակ:

Բայկան է լավ մաքրել և ոդափոխել սենյակը: Հիվանդի մահճակալը կարելի չէ լվանալ տաք ջրով կամ մոխրաջրով: Կեղտոտ սպիտակեղենը թրջել, յեփել և դրանից հետո լվանալ:

Այն հիվանդութունները, վորոնց մասին մենք կարճ պատմեցինք՝ դիֆտերիան, բուբեչը, կարմրուկը և դրիպալը, աչքի յեն ընկնում նրանով, վոր ար-

*) Ինչպէս և կարմրուկից հետո:

ձուներքի մանր կաթիլներում, վոր արտադրվում է հի-
փանդներէ կողմից հազի, փոշտոցի և անգամ խոսակ-
ցութեան ժամանակ, պարունակում են հիվանդութեան
զբաղիչներ (միկրոբներ)։ Այդ պատճառով ել այգայիսի
վարակիչ հիվանդութեանները կոչվում են կաթիլային
ինֆեկցիաներ։ Դրանից բղիում է կարևոր կանոն։ Չի
կարելի հազալ, փոշտալ, կամ բարձր խոսել ուրիշի
դեմքի առաջ։ Հագուելու դեպքում պետք է բերանը
փակել թաշկինակով կամ ձեռքով. (հետևի կողմով)։
Յեզ նոսրնպես պետք է վարվել փոշտալու ժամանակ։
Չի կարելի բղալել ուրիշի դեմքի առաջ։ Թքել կարել-
լի յե միայն ուրնաների մեջ կամ թքամաններում։
Յերեխաները չպետք է հաճախեն գրիպով հիվանդ-
աներին, (ինչպես նաև այլ վարակիչ հիվանդութեան-
ներէ ժամանակ) իրենց ընկերներին, քանի նրանք չեն
առողջացել։ Ձեռքով բարեկեցուց անհրաժեշտ է միան-
գամայն ձեռնպահ մնալ։ Ձեռքերը պետք է հաճախ
ստպոնով լվանալ։ Հարկավոր է խուսափել
նայել չըջապատի ջերմաստիճանի սուր փո-
փոխումից. ցուրտ շենքից տաք շենք մըտ-
նելիս, անհրաժեշտ է անմիջապես հանել վերնա-
հագուստը։ Յեզ ընդհակառակը — տաք շենքից ցուր-
տը դուրս գալիս՝ պետք է հագնել վրայի շորերը։
Հարկավոր չէ յերեխաներին չափազանց շատ փաթա-
թել։ Պետք է նրանց կովել, վարժեցնել շատ ժամա-
նակ անցկացնել բաց ոդում և տարվա բոլոր յեղանակ-
ներին զբաղվել ֆիզկուլտուրայով ու սպորտով։

ԲԾԱՎՈՐ ՏԻՑ.

Բժաւոր տիֆը հագորդվում է վոշիլների միջո-
ցով, վորոնք սկզբում կծելով հիվանդին, իսկ հետո

առողջ մարդուն, վարակը տարածում են մարդկանց
մեջ։ Բժաւոր տիֆի զբաղիչը գտնվում է բժաւոր տի-
ֆով հիվանդի արշան մեջ։ Բժաւոր տիֆի մասին ուղ-
ղակի կարելի չէ ստել՝ այնտեղ, վորտեղ չկան վոշիլ-
ներ, չկա և բժաւոր տիֆ։ Բժաւոր տիֆի հիվան-
դութեաններն ավելի հաճախ յերեվում են աշանը
և ձմառը։ Տարվա այդ յեղանակին, յեթե կա մարդ-
կային կուտակվածութեան և կեղտ, վոշիլները հնա-
րավորութեան են ունենում բազմանալու և տարա-
ծելու վարակը։ Բժաւոր տիֆից հետո մարդն առ-
հասարակ անողայուն է դառնում. բժաւոր տիֆով
հիվանդանալը 2-րդ անգամ շատ քիչ է պատահում։
Գաղտնի ժամանակաշրջանը տեւում է 10-14 օր։
Ձերմութեանը բժաւոր տիֆի ժամանակ սովորաբար
բարձրանում է հետզհետե՝ ստտիճանաբար։ 4-րդ
օրն արդեն հասնում է 39-40 աստիճանի։ Տաքութեանը,
ընդհանուր անամար, պահպանվում է 12-14 օր։
Մենք արդեն ասել ենք, վոր վոշիլների բացակայու-
թեան դեպքում չի կարող լինել և բժաւոր տիֆ։ Ուս-
տի գլխավոր ուշադրութեան պետք է դարձնել վոշ-
րտութեան դեմ մղվող պայքարին։

Հաղուստի վրա գտնվող եզ վոշիլը մի ամալա
ընթացքում կարող է անել 300 ձու։ Մեկ ամսից հե-
տո նոր տերունդն իր հերթին կարող է բազմանալ յեզ
կարճ ժամանակամիջոցում մեկ վոշիլը կարող է տալ
հախարական սերունդ։

Յեթե յերեվան են բերված վոշիլտաճ յերեխա-
ներ, պետք է անմիջապես մաքրել վոշիլներից։ Դա
տանխտարական դիտումների ամենատառջին խնդիրն

ե, վորը կատարվում է մեր դպրոցներում: Մտողները պետք է ողնեն նրանց, վորպեսզի դպրոցում վոջրոտած յերեխաներ բոլորովին չլինեն, վորովհետև մեկ վոջրոտ յերեխայից հեշտութեամբ կարող են սխարակվել մյուսները:

Վոջրոտներ վոչնչացնելու միջոցների մասին տես վերեւից՝ յերեխաներին սանիտարական — առողջապահական ընտելութեան յարժեցման զրույցում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ ՏԻՖ.

Վարակի տարածման ձևով բժամոր տիֆին մոտ է կանդիաձ անդրադարձ տիֆը: Նա նույնպես տարածվում է վոջրոտների միջոցով: Անդրադարձ տիֆի ժամանակ ջերմութեանը սովորաբար վերև է թուշում շատ մեծ արագութեամբ — հիվանդութեան առաջին իրի որը նո կարող է հասնել 40 աստիճանի: Մի ժամանակ սկզբվում է՝ գլխացավ, դողոցք, մկանուքային ցավեր յեւ այլն: Մի քանի որ ջերմութեանը բարձր աստիճանի մնալով՝ արագ իջնում է, սովորաբար ուժեղ քրտինքի հետ միասին: Անդրադարձ տիֆի ժամանակ հետևում է տենդային և վոչ տենդային ընդմիջումներ և այտուցից էլ առաջացել է հիվանդութեան անունը: Տենդի բռնկումների (հիվանդութեան անդրադարձութեան) քանակը յերեխաների մոտ ճոճվում է 2-6 անգամ: Տաքութեան արագ բարձրացումն ու անկումը խիստ մաշում է հիվանդին:

Նախադրուշական միջոցառումները նույնն են, ինչ վոր բժամոր տիֆի համար: Բացի վոջրոտների

հետ մզիող պաշարից, այստեղ պետք է ի նկատի ունենալ նաև վարտոջրոտներին, վորոնք նույնպես հասնախ վարակ են տարածում:

ԴԻՉԵՆՏԵՐԻԱ ԿԱՄ ԱՐՆԱԿՈՒԾ.

Դիչենտերիայի զրգուիչը — դիչենտերիայի ցուպիկը, ընկնում է որդանից մեջ միայն բերանի միջոցով վարակված կերակրի կամ խմելիքի հետ միասին. նա կարող է տարվել նաև կեղտոտ ձեռքերով կամ կեղտոտ առարկաներով, վորոնք կարող են բերանն ընկնել այս կամ այն ճանապարհով: Որդանից մի մեջ մտած դիչենտերիայի ցուպիկները տարածվում են նախեւ վորոտիքում: Դիչենտերիայի ժամանակ զարմնի ժամանակաշրջանը տեւում է մի քանի յերեք որ: Դիչենտերիայի ժամանակ ամենաբնութագրող և անսխալ ցուցանիշ է հանդիսանում հաճախակի լորձուքա-արցունային կղկղանքը, վորի հաճախակի լինելը կարող է հասնել որակաւ մինչև 20 անգամ և ավելի, վորը շատ թուլացնում է որդանիցը: Արնայուծը հաճախակի գուգակցվում է ցավերի հետ վորավայնում: Կղկղանքի հետ միասին հիվանդն արտաշում է դիչենտերիայի ցուպիկներ: Ճանճերը նատելով այդ կղկղանքին, նրանք վարակը տարածում են անդամթերքների վրա:

Այդ պատճառով էլ հիվանդութեաններն ավելանում են ամառային և աշնանային ամիսներում, յերբ ամենից շատ ճանճ կա: Ճանճերը չափազանց արագ են բազմանում: Ճանճի եզր միանգամից դնում է մինչև 120 ճու և ձվից ճանճ զարգանալու համար բավական է 14 որ, յեւ կարճ ժամանակամիջոցից

հետո ջահել ճանճերն ընդունակ են իրենք բազմանալու :

Իրդենտերիայով հիվանդի կղկղանքը կարող է ընկնել բաց ջրհորի մեջ և կեղտոտել ջրհորը և ահա այդ ճանապարհով ստեղծվում և վարակման աղբյուր՝ ջրի միջոցով : Մինչև հեղափոխությունը դիզենտերիայով հիվանդանալու դեպքերը հաճախակի ելլին հանդիսւում, հատկապես բանվորական ավաններում, ճամբարներում, այնտեղ, վորտեղ բացակայում էին նորմալ սանիտարական պայմանները : Իրդենտերիայի տարածմանը նպաստում և՛ ջրմուղի, կոյուղու, ինչպես նաև ջրամատակարարման ընդհանուր անկանոնությունը : Վերջին տարիներս դիզենտերիայի հիվանդությունների դեպքերը զգալի չափով պակսել են :

Իրդենտերիայով հիվանդին պետք է ուղարկել հիվանդանոց : Յեթե այս կամ այն պատճառով հնարավոր չէ և հիվանդը բուժվելու համար մնում է տանը, ապա նրան պետք է տեղավորել առանձին, լավ ողափոփով սենյակում, կամ ծայրահեղ դեպքում, ընդհանուր սենյակում առանձնացնել լուսավոր անկյուն լուսամտով մոտ, կտրելով նրան շիրմայով կամ վարադուլրներով : Վորպեսպի հիվանդը մաքուր մնա, նրան պետք է ըխնայ տաք ջրով :

Հիվանդ յերեխային պետք է դնել ուտինե չրջանակի վրա, իսկ նրա տակը պահել դիչերմանը : Այդ ճանապարհով հաջողվում է յերեխային ազատել ամեն անդամ դիչերմանի վրա նստելու անհրաժեշտությունից : Իրդենտերիայով հիվանդին պետք է ամեն կերպ տաքացնել, փորի վրա դնել տաք շշեր, շշերը

փաթաթելով սրբիչի մեջ, կամ դնել փամփուշտ տաք ջրով : Հիվանդի խնամքի նկատմամբ մեծ գեղ է խաղում ձիշտ սնունդը : Չպետք է, ինչպես առաջնորումն էր արվում, դիզենտերիայով հիվանդին ասիպել սովելու, քանի վոր սնուցի պակասությունը թուլացնում է և կարող է վատացնել հիվանդի դրությունը : Հիվանդի սնուցի համար կարող են հանձնարարվել կաթ՝ ավելացնելով լորձուքային կամ այլուրի յեփուկ և շաքար, այնուհետև կաթով սուրճ, մածոն, պաքսիմաթ, հեղուկ կաշա, մրդի հյութեր, բուլյաններ : Հիվանդի դրությունը բարելավելու դեպքում՝ կտրելի յե տալ միս, ձուկ, յեփած խնձոր յեփ չիփած մրդեր :

Հիվանդությունները տարածելուց յուսապելու համար անհրաժեշտ է ախտահանել հիվանդի կղկղանքը բժշկի ցուցմունքով : Հիվանդի կղկղանքը հարկավոր է ախտահանել նաև առողջանալուց միտոժամանակ հետո վորովհետև մի քանի յերեխաներ, բացիլատար են մնում իրենց հիվանդությունից հետո և կարող են տարածել վարակը :

Այն սենյակը, վորտեղ պատկած է հիվանդը վաղ վոք չպետք է մանի, բացի նրան ինամոդներից : Հիվանդը պետք է ուրափ առանձին ամաններից, վորը չպետք է դուրս տարվի և լվացվի նույն սենյակում, ինչպես նաև հիվանդի ամբողջ շորերը՝ հարներու, անկողին, սրբիչներ, անձեռնոցիկներ և այլն պետք է պահել ու ըխնայ առանձին, լավ յեռացնել յեփ հարթուկել, մինչեղ լվանարը թրջել բժշկի կողմից ցույց տրվող ախտահան

նաղ լուծուցի մեջ, նույնպես պետք է վարվել նա-
յեպ ընկալող վերին հազուադասների հետ: Չվարչվող
վերելի հազուադասները հարթուկվում են սաք հար-
թուկով: Հիվանդ յերեխային խնամող անձնավորու-
թյունը պետք է կրի խալաթ, կամ գոգնոց, վորը
պետք է ծածկի նրա մարմնի առաջին մասը և սեն-
յակից գուրս գալիս պետք է թողնել սենյակում: Հի-
ջանդի արտադրանքին, նրա հազուադասներին և սպի-
տակեղենին, ինչպես նաև անկողնուն յուրաքանչյուր
գիշերելուց հետո և ամեն անգամ նրա սենյակից
գուրս գալուց առաջ պետք է ձեռքերը սապոնով լավ
լվանալ: Յանկալի յե գործածել արտահանող թույլ
լուծուցի բժշկի ցուցմունքով: Հանձնարարվում է
նույնպես հիվանդի սենյակի դռան առաջ դնել ջրն-
ջոց, վորը հարկավոր է թրջել արտահանող լու-
ծուցիով. նույն լուծուցիով պետք է թացացնել նաև
դռան բռնիչները: Բնակարանում բոլոր սպորտները
ուտելուց առաջ և արտաքնոց գնալուց հետո պար-
տադիր կերպով պետք է սապոնով լվանան իրենց
ձեռքերը: Սեբոզ կերակուրը պետք է պահպանել
ճանճերից, պետք է աշխատել բնակարանում բոլոր-
րովին վոչնչացնել ճանճերին: Այդ բոլոր միջոցա-
ռումներն անհրաժեշտ են նրա համար, վորպեսզի
նախագրուչացնել վարակումից բնակարանում մյուս-
ապրողներին:

Յեթև սովյալ վայրում յերեխայեկ են դիզենտե-
րիայի կամ այլ սաւր վարակիչ վոքոտիքային հի-
վանդուկիւններ, պետք է լուրջ միջոցներ ձեռք առ-
նալին:

Առաջին հերթին պետք է հետեւել սննդամթերք-
ներին, նրանց պահպանել ճանճերից: Այն սննդա-
թերքները, վորոնք ոչ են պահանջում, կարելի յե
ծածկել յերկաթացանցից կամ մաուլիայից պատ-
րաստված ծածկոցներով:

Բնակելի տները պետք է պահպանելն կատարյալ
մաքրության մեջ: Կերակրի մնացորդները պետք է
անմիջապես հեռացնել կամ այրել: Պետք է շատ լավ
լվանալ ամանեղենը:

Կարեւոր միջոցառում է ճանճերի դեմ մղվող
պայքարը: Նախ և առաջ անհրաժեշտ է վորպեսզի
բաց չպահվի գոմաղբը և աղբը, վորտեղ սովորաբար
բազմանում են ճանճերը, ույլ պետք է պատրաստ-
ուել բարեկարգ գոմաղբանոցներ: Ճանճերի հետ
պայքարի լուրջ միջոցառումն է հանդիսանում մաչչուն
թուղթը: Կաչուն թուղթը ճանճերի համար կարելի
յե պատրաստել հետեյալ ձևով. յերկու մաս ման-
րացրյալ կանիֆոյ տաքացնում են կրակի վրա յեպ
միացնում են մեկ մաս լուծողականի հետ ու քսում
են թղթի վրա, թղթի կողքերից մաքուր թողնելով
2-3 սանտիմետր: Քսած մակերևույթի սահմանները
պատվում է հալեցրած մեղրամոմով, վորպեսզի սո-
սինձը չհոսի կողքերից:

Կարելի յե ոչտվել յերկու տոկոսային ֆորմալինի
լուծուցիով 1500 խորանարդ սմ. ջրին 10 խորա-
նարդ սմ 40 տոկոսային ֆորմալինի լուծուցի յեպ
30 գրամ շաքար, լցնելով ախտեյի մեջ, նախորոք ախ-
տեյի հասակին դնելով ծծուղակաւ թուղթ:

Յղարկում են նաև ճանճասպան անկաջրով. սուսկերը մտնորացվում են, լվանում յետոցրած ջրով և ստանկուց հետո վրան ցանում են շաքար:

Կաթը և խմելու ջուրն անհրաժեշտ է յեփել: Անհրաժեշտ է հետեփել, վորսեպի ճկեղտոտովի ջրամատակարարման աղբյուրը:

Վորսեպս պաշտպանողական միջոցառում գործածակոն են պատվաստումները: Պատվաստում են զանազան ձևերով՝ սրակումներ են կատարում մաշկի տակ, ներսն ընդունելու համար տալիս են տարբերականեր կամ հեղուկ:

ՎՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ ՏԻՖ.

Վորովայնային տիֆով վարակվելը, սխտես, ինչպես և դիզենտերիայով, զգալի չափով կտիված է վատ ջրամատակարարումից և կեղտոտությունների (աստանեղացիայի) գուրս տանելու անկանոնությունից և անփութությունից: Վարակը հաղորդվում է կերակրի, ջրի հետ, կամ կեղտոտ ձեռքերով՝ բերանի միջոցով:

Վորովայնային տիֆի գազանի ժամանակաշրջանը միջին հաշվով համասար է 12-14 օրվա: Վորովայնային տիֆը յերեխայի մոտ սկսվում է ցավերով, տաքության բարձրացմամբ, գողով, հաճախ պոտախառնությամբ և ախտը հետ ստարով: Հնարավոր է փորակապտություն: Դեպքերից կեսի ժամանակ նկատվում և թեթև ցավ, գլխախորտապես փորի վրա և ձեռքի ու վուրքերի ներսի մակերեսի վրա: Վորովայնային տիֆով հիվանդն արտադրում է հիվանդության

զբաղվել, գլխախորտապես կղկղանքի և մեզի հետ միասին: Գրգռիչի արտադրությունը կարող է սկսվել նաև գազանի ժամանակաշրջանում և չարտանակվել անհարց ժամանակամիջոց նախեմ առողջանալուց հետո (ինչպես դիզենտերիայի ժամանակ):

Վորովայնի տիֆի ցուպիկը նույնպես, ինչպես և դիզենտերայինը, պատահում են անդամթերքների վրա, խմելու ջրում, ջրամբարներում (ջրհորներում, լճերում և այլն): Վորովայնային տիֆով կարելի է վարակվել կամ հիվանդին, կամ նրա իրերին դիպելու միջոցով, վորոնք վարակված են հիվանդի արտաթորանքով, խեղ ամենից շատ՝ կերակրի և ջրի միջոցով:

Հիվանդի խնամքը, նրան կերակրելը, նրա արտաթորությունների ախտահանումը, ճանճերի հետ մղվող պայքարը, անդամթերքների կեղտոտվելուց պաշտպանելը, պատվաստումները, լիքերի ախտահանելը—այդ բոլոր միջոցառումները վորովայնային տիֆի ժամանակ հիմնականում նույնն են, ինչ վոր դիզենտերիայի ժամանակ: Չնայած այդ յերկու հիվանդություններն տարբեր են — առաջանում են տարբեր զբաղիչներից և տարբեր ձևով են բժշկում, այնուամենայնիվ վարակն որդանիցմի մեջ ներթափանցելու ձևով նույնն են (վարակված կերակրի, ջրի, կեղտոտ ձեռքերի միջոցով դեպի բերանը և այդտեղից ել դեպի փորոսիքը): Այստեղից ել՝ թե մեկ, և թե մյուս հիվանդության նախազուլայաման ընդհանուր ուղիներն են: Նախազուլայական պատվաստումներն անում են սովորաբար միաժամանակ վոր

րովայնային տիֆի և դիֆտերիայի դեմ միասին...
(առապես կոչվող դիֆտերիային) :

Վերջում բերենք մի քանի դեպքեր պրակտիկայից .

1) 2-րդ դասարանի աշակերտ Սաշա Գրիգորյանի վր հիվանդացավ դիֆտերիայով, սակայն ծնողները սկզբում հրաժարվեցին նրան տեղափոխել հիվանդանոցում : Վերջիվերջո բժիշկներին հաջողվեց համոզել նրա ծնողներին և հիվանդը հիվանդանոցի 3-րդ ուղի տեղափոխվեց : հիվանդանոց, սակայն նա արդեն կարողացել էր շրջապատողների միջոցով, առարկաների միջոցով, ուղի միջոցով, վորի մեջ թուշում են թքի և խորխի ջրահաթիլները, տարածելու վարակը և այդ պատճառով նույն տնում դիֆտերիայով հիվանդացան ևս մի քանի յերեխաներ :

2) 3-րդ դասարանի աշակերտուհի Վալյա Կոստանտինովային զութեչից հետո դուրս գրեցին հիվանդանոցից : Աղջիկն իրեն լավ էր զգում : Ծնողները գտան, վոր յեթե իրենց աղջկան հիվանդանոցից դուրս են գրել, ապա նա շրջապատի համար անվնաս է և իսկույն նրան դպրոց ուղարկեցին : Մի առ ժամանակից հետո, դպրոցում զութեչով հիվանդանալու դեպքեր յերեխային և գտան, վոր այդ հիվանդութունը բերել է Վալյան : Ինչպես յերեփում է հիվանդանոցում մնալու վերջին ուրերին նրա բերանի խոռոչում ընկել են թարմ միկրոբներ՝ հիվանդանոց նոր բերված հիվանդ յերեխայից : Իրեն Վալյային, վոր զութեչով հիվանդացել էր, այդ միկրոբներն ար-

դեն վնաս չբերեցին, սակայն նա հիվանդութունը տարածեց դպրոցում այլ յերեխաների մեջ : Ծնողները չբիտեցին անգամ, վոր հիվանդանոցից դուրս գրված զութեչով հիվանդ յերեխային պետք է տանը պահել, ուրիշ յերեխաներից հեռու, 8-10-12 որվա ընթացքում և դպրոց թողնել միայն ամբուլատորիայի, կամ սանիտարական բժշկի գրավոր թույլատրությամբ (տեղեկանքով) :

3) 4-րդ և 5-րդ դասարանների 2 աշակերտի ծնողներ — Նիկոլայիների մոտ ազգականուհին հիվանդացավ, վորն ապրում էր այլ բնակարանում : Հիվանդութունը լուրջ դուրս յեկավ՝ վորովայնային տիֆ : Հիվանդին թույլ տրվեց տանը պահել, քանի վոր նա ապրում էր մեկուսացված սենյակում, ատանձին մուտքով և նրան խնամում էր նրա հետ ապրող մի կին : Ըստ վորում բժշկի կողմից պայման դրվեց, վոր բացի խնամողից այլ այցելուներ հիվանդի մոտ չպետք է թողնվեն, վորպեսզի վարակը չտարածվի : Սակայն Նիկոլայիան այցելում էր հիվանդ ազգականուհուն, ըստ վորում ձեռք չառնելով անհրաժեշտ միջոցառումներ վարակը տեղափոխելու դեմ : Նա ինքը չհիվանդացավ, սակայն նրա յերեխաներից մեկը՝ 12 տարեկան Բորիսը, հիվանդացավ վորովայնային տիֆով : Հեաադոտման ժամանակ պարզվեց, վոր Նիկոլայիան բացիլատար է յեղել և ինքը չհիվանդանալով վարակը տարել է իր ընտանիքի մեջ :

Այս որինակները համոզիչ կերպով ցույց են տալիս, թե վորքան կարևոր է պահպանել վարակիչ հիվանդութունների դեմ մղվող պայքարի կանոններ-

ըլ և ինչպես այլ կանոնները չպահպանելիս հեղ-
տուժյամբ կարող են հիվանդանալ իրենք և վարակել
իրենց ղեկավարներին ու հիվանդությունը տարածել
ուրիշների մեջ:

Միևիայն վարակիչ հիվանդությունների դեմ մըղ
վող պայքարի հիմնական բոլոր պահանջները ճշտու-
թյամբ կատարելու, կարանտինի, դիզենֆեկցիա-
յի կանոնների և բժշկի բոլոր ցուցմունքների խիստ
պահպանման, ամեն տեղ և ամեն ժամանակ խիստ
մաքրություն պահպանելու շնորհիվ մենք լիովին
կախրացնենք անցյալի ծանր ժառանգությունը՝ վարա-
կիչ հիվանդությունները և նրանցից կպահպանենք մեր
զավակներին:



Բուսերենից բարգմանեց՝ Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
Թարգմանությունը խմբագրեց՝ Բ. ԳՈՉԱՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ ԴՈՆԴԱՐՈՎ

Сдано в производство 10/XI-37 г
Разрешено к печати 31/I-38 г.
Кол. печ. листов 1 3/4
Кол. печ. знаков 100,914

Главлит № 503 Ст. 364 А—6. Тип. «III Интернационал».
Баку, ул. Саратовца-Ефимова, 29 Зак № 4057. Тираж 1000.

06

« Ազգային գրադարան



NL0270109

179

ՕՂՐՈՄԲԱՅ ԵՎ ԴԵՅՆԵՐ

Խտիճայի մաքտայ մյալլիմլաճինի մաքտայլի-
լաճին աթա-անալաճի իլա արաթաթաղաճի սախՅաթ
ուսոյ մաթիալլաճ.

ГРОМБАХ и ДЕЙНЕР

Маթиալլաճ ճիլա Յաթաթալ ճիլա ճախալ-
նալ ճիլա սոճիլաթալա ճիլա ախաթիլաճիլա.
